

ԿԱՐԾԵԼ և ԿԵՂԾԵԼ ին

Ն Ա Խ Ի Զ Բ.

Մ. Նեւուոն խանին

կարդացի Զեր « կարծիք և կեղծիք » վերնազրով յօդուածը բազմավէսի Ապրիլ թիվն մէջ: Դուք՝ կարծեկից գտնուելով հանդերձ Տըթ. Մ. Ս. Գարբիէլեանին՝ այս երկու բառերուն միւնոյն ձեն ունենալը կը հերթէիք: Տըթ. Գարբիէլեան արդէն ըստ ձեզ հաստատեր էր թէ «այդ երկու բառերը իմաստով իրարու հակառակ են և կազմով այլեայլ»:

Դուք նկատի չէք առներ տառերու լըծորդութեան օրէնքները և կ'ըսէք թէ «կեղծելի համապատասխանող օտար բառերէն և ոչ մին կարծել ի նշանակութիւն կու տայ», առանց դիտելու որ, արդէն կարծելի և կեղծելի համապատասխան բոլոր օտար բառերը արմատակից են և անոնց տառերը՝ լժորդ:

— Թէ ի՞նչպէս:

Նախ զիտենք որ «կ» և «ղ» լժորդ են, օր. կոիր, պրս. ց. ցրիւ, կրկն, պրս. ց. ցէ, զօնչէ, հայ. կրծ, պրս. շ. զէյշ, կապ, աճ. չ. պազ, ելն, ինչպէս նաև «փ» և «կ». օր. կոիր, անզլ. frōj, պրս. (ց. ցր), լտ. fricare, և որովհետեւ «փ» և «փ» շրթնային տառերը յաճախ կը լժորդուին նուրբ զիրերու հետ (պ. կ. տ. ծ. ճ. կլն.) կ'ունենանց պրս. փերիյան նայ, իլիյան հետ, որ նոյնիմաստ բառեր են, անզլ. frōd, հայ. գտնել (զիտ) ու (ն) ին անկումով, անզլ. frōv, հայ. հոր, (կրակ) պրս. շնյոշկ, փինճիւշը, կամ շկյուշ քինճիւշը = ճնճուկ կլն.:

Հիմա բննենք կարծել և կեղծելի բուն արմատը օտար լեզուներու մէջ:

Բայտ մեզ կարծել և կեղծել բայց մութեամբ միւնոյն են և ներքին իմաստով մէն ալ զոյզն ինչ զիրար կը շօշափեն: կարծելը միայն արարելէնով (յշր)

բաղդատել՝ առանց միւս լեզուներու մէջ ալ փնտուելու միւնոյն արմատը՝ անտրամարան ստուգարանութիւն մը պիտի ըլլար, ինչպէս կը կարծենց որ, է «դպրածեալ կարծիք և կեղծիք»ի ստուգարանութիւնը:

Կարծելը բաղդատելով ուրիշ լեզուներու հետ, արմատակից կը գտնենք անոր, անզլ. guess, («ր» ին չնջումով, որ յանձնի հայերէնի մէջ ալ կը պատահի, ինչ. խորհ - ել, խոհ - ուն, մարհ, մահ, բարշել, բաշ - ել, յաւերժ, յաւէժ կլն) դանիական, gisse, շուէտ, gissas, հուանտ, gissen, իսիս. ՝ giska = git - ska, որ յառաջ կու զայ get արմատէն: Ասոնց կցելով նաև արբ. յշր խարս և այլա գրյաս և պր. շ. ց. ֆէյուս, ը որով աւելի կը ճշորի, կը համատառուի «գ» միջակ տառին լժորդութիւնը «փ» շրթնայինին հետ, կը հուեցնենք որ կարծելին արմատը չնդեւոպական և Ասմական լեզուախումբերու մէջ միւնոյնն է: իսկ յշրը (արաբական արտասանութեամբ ֆարտ) աւելի տրամարանական է և ճիշդ, պարտը (վազիթէ, պօրճ) ին հետ բաղդատել քան կարծին հետ:

Կեղծելն ալ միւնոյն կազմն ունի այս երկու լեզուախումբերուն մէջ. անզլ. false, գերմ. falsch, լտ. falsas, ֆր. fausse (որոնց մէջ կը տեսնուի մերթ «լ» և «ր»ի լժորդութիւնը և երբեմն մէկ կամ աւելի տառերուն արտաքսումը) պրս. շ. զէյշ, արբ. չէ, զօշէ, = կեղել են:

Այս օրինակները յիշելին, և «կ»ի ու «փ»ի լժորդ ըլլալը հաստատելին վերջ կրնանց վաստահարար ըսել թէ անզլ. false (կեղծ) և guess (կարծ) բառերը նոյն արմատն ունին. բայտին «f»ը, «g»ի փոխուելով և «l»ն ալ ջնջուելով նոյնացեր են անոնք, ինչ որ կը ստուգէ թէ հայերէն կարծ և կեղծ բառերն ալ նոյն արմատ են: Միայն թէ ժամանակի ըն-

1. Դպրածիք. Այս բառերուն համար դիմած ենք անզլ. ստուգարանական բառաբանին. հեղինակ. Skeat:

թացքին մէջ իրարմէ տարրեր ուզգութիւն բռնելով բաւականին հեռացած են և երանգաւորուելով ու եղանակաւորուելով թէ հնչումին և թէ իմաստնին ալ փոփոխած: Իսկ թէ ինչպէս անոնց բռն իմաստնին կորսնցուցած և իրենց յատուկ զատ զատ նշանակութիւնն ունեցած են, թող թժկապիտ Ա. Ս. Գարբիէլեան ինքը խօսի իր այն՝ յօդուածին մէջ, որ Օտար Բատերը Հայերէնի մէջ վերնագիրը կը կրէ:

«Օրինակները անթիւ են, կ'ըսէ Մէծ. յօդուածագիրը, այն բառերուն, որք սկզբանապէս և ստուգարանօրէն շատ պարզ և անշան բան մը ցոյց կու տան, սակայն գործածութեան չնորդիւ իրենց բարձրօրէն զարգացած հիմնարկութեան մը վիճակի մը գործողութեան քաջայաց նշանակութիւնը: Օր. թօթ բառը սկզբնապէս առ կամ ձագ կը նշանակէր, յետոյ կիրարկուած իրարմէ տարրեր հեռաւորութեամբ տնկուած ձողեր, կայանի և հանգրուանի նշաններ ցոյց տալու և վերջապէս առած է կառավարական թղթատարութեան արդի ահագին զրութիւնը ցոյց տուող նշանակութիւնը: Նոյնպէս դոդ բառը, ժողովուրդը կը նովիրագործէ զայն, անոր ձեւը, գոյնը, նոյն իսկ իմաստը կը փոխէ և չերմին հետ կը նոյնացնէ»:

«Քիչ կայ լեզու, կ'ըսէ Այտընեան⁹, որուն բառերը ժամանակաւ չի սղին, չամփոփուին թօթափելով ոչ էական մասունքը՝ էական տարրէն կամ արմատէն. ասով ձեւացած են շատ նորագոյն լեզուներ, կամ թէ ասով առած են իրենց նոր կերպն ու կերպարանքը»: Այսպէս եղած է նաև հայերէնի համար Համարիլ բայց զրաբարի մէջ կը նշանակէր կարծել, վարկանել, «ա»ին անկումով եղած է համրել, հաշուել, (սայմագ): Վայելել, (սէֆա սիւրմէց) վայըլ (եազգըմագ): Նոյնպէս «փող» բառը պօդագ և պօրու կը նշանակէ, իսկ պողել = այրթամագ, և աւելի վերջերը պեղել = փորել, հանել, նոյն արմատէն ըլլալով իրենց յատուկ գործածութիւնը ունեցած են: Դիտել բայց կի՞ լեզուի մէջ

կը նշանակէր սպասել, մինչդեռ հիմա աշխարհիկ լեզուին մէջ պարզապէս նայի կը նշանակէ, («սէյրէթ»), թէն իր հիմաստը պահած է ցարդ ակնդիտ բառին մէջ: Զգել կը նշանակէր երկնել, և հիմա կը նշանակէ բողով, պղրազմազ: Օրինակները շատ են:

Միթէ այս օրէնքով չէ՞ որ լեզուները (առանց բացառութեան) ունեցեր են ‘Հօդուուց’ բառուած բառերը, որ լեզուարանութեան մէջ նշանակելի կարեւորութիւն մ'ունին այսօր:

Ուրեմն, կրցանց կարծեմ բաւականին հաստատել որ կարծ և կեղծ արմատները նմանածայնութեան կանոնով միենոյն ձևը և կազմը ունին, «ր» ի և «շ» (լ) ի փոխանակութեամբ: Ինչ սոյ, սոյր, սպահամ, սրահամ, անզլ, յրար, տճ, ձև եըլ, և աւելի բացայայտ կը տեսնենք այս պարագան ըննելով ուսմօրէնը Անգրագէտ շինականը կ'ըսէ. «Հեմ կընար երթար, կըրնայ տեսներ մելն»: Այս օրէնքով է որ դարձեալ մեր բացասական բայերու մէջ «լ»ը «ր»ի փոխուած է, Օր. շեմ ի տեղ, = չեմ լսեր, ելն: —

* * *

Իսկ գալով կասկածել և կարծելին կ'ընդունինք թէ նոյն են անոնք: Արդէն Հիւպըշման բացատրած էր զայն Հանդէս ամսորդային մէջ կայծ – կայծ – ել ձեռով որմէ սղուով կ'ունենանց կասկածել և «յ»ին և «ր»ին լծորդութեամբ կայծել, կարծել: Մեծանոն հայագէտը կ'ընդունէք նաեւ որ կեղծ և կեղծ արմատները միենոյն են և պատեանի նշանակութիւն կու տան, ինչ որ մեր ալ զաղափարը կը շօշափէ կերպով մը:

Աստուր. Գ. Զօրգանաւ

1. Տե՛ս, Բզմագ. Ապօել թիւ.

2. Հմամ. քննկ. թիւ. Հ. Այտընեան, էջ 275.

3. Հոմոնում, Նոյնամայն և այլիմաստ բառեր: Օր. կոյ = (կոզմ, ազջելի) այս = (չար ողի, ասուկա): Հարի, պէտ, յարի, (կատեկն): Հոտ, բոյր, հօտ = երամակ եւն: